

ԽԱԶԻԿ ԴԱՏԵՆԱ

ԱՅՈՒՍ ՃԻՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒ
ՎՈՏՈՎԵՎԵՆԻ
Ակադեմիա Խառ
ՀԽՍՀ



ԱՐԳՈՎՈՐԾ

891.990

Դ - 19

30 MAY 2011

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТУ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

35-К
041102
891.99Г
7-19

ԿԱԶԻԿ ԴԱՏԵԼՑ

ԱՆՈՒՅ ԶԻՆ
ՑԵՎ ԻՐ ՔՈՒՌԱԿԸ

ԹԵՏՐԱՍ 1935 ՅԵՐԵՎԱՆ

28.03.2013

8093

Պատ. խմբագիր՝ Գ. Սարյան
Տեխ. խմբ. Ա. Քասպարյան
Նկարները՝ Հ. Գրիգորյանի
Սբագրիչ՝ Մ. Կափլանյան
Դրաշար՝ Արտ. Անեմյան
Գլավլիտ 461, հրատ. 3236
Պատվեր 124, տիրած 3.000
Պետհրատի տպարան, Յերևան



34H-82




Ախթալա գլուղում կար մի սիրուն ձի,
Անունը Անուշ ու շատ գեղեցիկ.
Ամբողջ աշխարհում չկար եղակս ձի,
Ենքան սիրուն եր, ենքան գեղեցիկ:

Անուշը ուներ մի կարմիր քուռակ,
Քուռակն ել ճակտին մի նշան ուներ.
Նա յել վազում եր իր մոր պես արագ,
Նա յել իր մոր պես ենքան սիրուն եր:

Աշխատում ելին նրանք միասին,
Հանքից ողինձ ելին Ախթալա տանում.

Տուն ելին դառնում նորից միասին,
Միասին նստում ու հանգստանում:

Մողը լծում եր կոմէրիտ Սողոն,
Կարմիր քուռակին կարոն եր լծում.
Վորպես քարտուղար ու լավ ձիապան
Կարոն սիրված եր իրենց բջիջում:



Նա նոր եր լծել կարմիր քուռակին,
Ու ենքան, ենքան սիրում եր նրան.
Գարին տալիս եր միշտ ժամանակին,
Քուռակն ել ուրախ վագում եր արագ:

Կանաչ ծառերի շարքերի միջով
Ջընգում ելին յերկու վագոններ.
Մեկին քուռակն եր քաշում խրխինջով,
Մյուսին քուռակի մայրիկը ծեր:

Բայց ծեր մայրիկին շատ եր չարչարում
Են անիրավը — կոմէրիտ Սողոն.
Գաղտնի լափում եր Անուշի գարին,
Տված դարմանն ել խառնում եր հողով:

Յեվ չեր իմանում բջիջը գյուղի,
Թե վնաց եր Սողոն Անուշին ծեծում.
Նա գարին տալիս առնում եր ողի,
Հարբում եր հետո ու ձիուն լծում:

2

Մի որ Անուշն ու քուռակը դարձան,
Կերան մի քիչ խոտ ու հանգստացան.
Անուշը նայեց կարմիր քուռակին,
Քուռակն ել նայեց մայրիկին՝ անձան:

Պառկեցին գոմում, իրար կողք-կողքի,
Նայեցին իրար կարոտով, սիրով,
— Սիրելի մայրիկ, ծերացել ես դու, —
Ասաց քուռակը մողը լիզելով:

Սողոն միշտ գաղտնի լավում եւ գարիդ,
Յեկ ամեն ծեզին գարու փոխարեն
Հողով խառնված հարդ եւ տալիս քեզ
Մեջքիդ խփում եւ քացի ու քարեր:



Իսկ կարոն ինչո՞ւ չի ուտում գարիս,
Չե վոր Սողոն ել նրա պես մարդ ե.
Կարոն չի ծեծում ինձ ճանապարհին,
Իսկ նա ուղում ե քո կաշին քերթել:


— Իմ կարմիր քուռակ, դու ի՞նչ ես տեսել,
Մարդիկ լինում են զանազան տեսակ.
Կար մի ժամանակ, վոր քեզ պես յես ել
Ունելի վճռկի, մի վճռկի հասակ:

Լծվել եմ հիմա յես մի նոր գործի.
Քեզ հետ պղինձ եմ Ալսթալա տանում,
Բայց յես նորից ձի յեմ, և վորպես մի ձի,
Հավատարիմ եմ շարունակ մարդուն:

Գուցե շուտ մեռնեմ, — մեռնակ մնաս դու, —
Ըսկնեմ, մի գիտի, մի ձորից, քարից.
Լսիր խոսքերս. — աշխատող մարդուն
Յեղիր միշտ մոտիկ ու հավատարիմ:

Յեկ զրուցելով քնեցին նրանք,
Անուշ ձին և իր քուռակը սիրով.
Վաղ ծեզին գոմի դուռը ճըռճըռաց
Ու գոմը մտավ կոմիերիտ կալոն:

Քուռակը տեսավ. ուրախ խըխնջաց
Յեկ վեր թոշելով լիզեց կարոցին,
Կարոն ել նրան մաքրեց ու լվաց,
Ու հետո ավեց քուռակին գարի:



Կերավ քուռակը հարդախառն գարին,
Հետո ջուր խմեց և ուրախացած,
Այնպես զիլ վազեց, վոր ճանապարհին՝
Կարծես քամի էեր ոլանում ցած:

3

— Հը, քափթառ ձի, քեփդ վհնց ե, —
Ասաց Սողոն ու մի քացի
Ամուր զարկեց ձիու մեջքին.
— Հերիք պառկես, գնանք գործի:

Զին վեր թռավ ու փռնչաց,
Հոտոտեց իր մըսուրը.
Հետո տխուր նայեց նա ցած,
Վոչ գարին կար, վոչ ջուրը:

— Այ դու քափթառ, գարի կուզես.
Ի՞նչ ես նայում ինձ խորը.
Յես ել քեզ պես մի փոր ունեմ
Լավ ե լցնեմ իմ փորը:

Ասաց Սողոն ու տոպրակով
Գարին հարդի տակն արավ,
Շուրջը նայեց աչքի տակով,
Զիուն քաղցած դուրս տարավ:

Յերկար վազեց մեր Անուշը,
Յերկար վազեց վեր ու վար,
Քանի անգամ գնաց ուշքը,
Ճանապարհին ընկալ վար:

Մի ծառի մոտ նա կանգ առավ.

Սողոն խփեց նրա քթին.

— Այ զու սատկած, քափթառ, պառավ,
Դու հանեցիր իմ հոգին:

— Տն, վեր կաց, ե, — ձին վեր թռավ.

Սողոն քացի տվեց փորին,
Զին խրանելով վազոնն առավ,
Վազոնի հետ կախվեց ձորից:

— Գնա, սատկիր. — ասաց Սողոն


Յեվ վազոնը հրեց կամաց.

Զին վերեից քարով, հողով
Վազոնի հետ դլորվեց ցած:

— Գոնե մի զույգ տրեխ քերթեմ, —

Ասաց Սողոն ուրախացած.

Իջավ ձիու մեջքը քերթեց
Կաշին առավ ու գլուղ գնաց:



Գնաց — մտավ իրենց տունը
Ու մի գիմում բջիջին գրեց. —
«Բնկեր Կարո, եսպիսի բան . . .
Մեր Անուշ ձին ցած գլորվեց . . .»

Տվեք մի ձի, վոր աշխատեմ,
Թե չե եսպես գործին թքած.
Բայ, վոր յես ել Անուշի հետ
Գլորվեցի քարափից ցած . . .»:

4

Ամբողջ բջջում, ամբողջ գյուղում
Կոմիերիաներն իրար անցան.
Գումարեցին հասուկ ժողով
Ու ժողովում թունդ տաքացան:

— Զես ամաչում, այ անպիտան
Ասաց Կարոն Սողոյին,
Զիու զարին ողու կտան,
Պատասխան տուր ժողովին:

Միշտ քաղցած ես նրան լծել
Ու ձեծել ես ճանապարհին.

Վոչ մաքրել ես, վոչ լվացել,
Վոչ տվել ես ջուր ու գարի:

ԶԵ՞ վոր թանգ ե ամեն մի ձին
Մեր մեծ գործին, մեր պալքարին.
Դու քու ձիուն վհնց պահեցիր,
Այ անիրավ, ես ինչ արիր:

ՅԵՎ բջիջը մի անողոք
Թունդ վորոշում հանեց եսպես.
«Թշնամի յեւ լեղել Սողոն,
Գաղտագողի մտել ե ներս:

Նա լափել ե ձիու գարին,
Ամիսներով, ամբողջ տարին,
Գլորել ե վերջում նրան
Ախթալալի հսկա ձորից:

ԶԼԱ հիմա մեր Անուշ ձին,
Սողոն մեզնից խլեց նրան.
Կտարում ենք նրան բջջից,
Գործը տալիս ենք դատարան»:

5

Մանեսից եր գալիս Սողոն,
Կարմիր տրեխները հագին.
Բարձրանում եր լեռնակողով
Իր գործերն ել թևի տակին:

Զորի դիմաց, մի ծառի տակ
Սողոն նստեց ճանապարհին.
— Եհ, թող փչվի եսպես կյանքը,
Ո՞վ ե կերել ձիու գարին:

ՅԵՎ միթե յես մի ձի չարժեմ,
Վոր տոմսը իմ ձեռքից առան.
ԶԵ՞, յես ձիուց ավել արժեմ,
Իզուր տվին ինձ դատարան:


Սողոն մեկ ել վերև նայեց
Տեսավ քուռակն եր գալիս.
Հըրնգում եր վագոնետկան
Կարոն հարալ եր տալիս:

— Ճամփիս տվեք, ճամփիս, ԵհԵյ,
Կանչեց կարոն, ու լոեց. —
Սողոն՝ նստած ու ճամփի դեմ,
Ուզեց կանգնել, մոլորեց ...

12

13

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ակադեմիա Խանություն
ՀՀ



Ալ չարագոլծ, փուչ կենդանի,
Մալրիկիս սպանեցիր.
Քերթեցիր մեջքի կաշին,
Քեզ տրեխներ կարեցիր:

Դե կորիր, փուչ արարած,
Արժանի չես դու հացի,
Հեռու գծից, վասարար,
Թե չե կտամ քեզ քացի:

Վազեցին քուռակն ու կարոն,
Իսկ Սողոն ծառի տակ կանգնած,
Գլուխը կախած ու մոլոր
Քարափից նայում եր ցած:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ամուսնիք չ ամէ շնորհաց մի
աղջկածոյս աղջկածոյս
աղջկած աղջկած պարագաներ
աղջկած աղջկած պարագաներ

աղջկած աղջկած պարագաներ
աղջկած աղջկած պարագաներ
աղջկած աղջկած պարագաներ
աղջկած պարագաներ պարագաներ

պարագաներ պարագաներ
պարագաներ պարագաներ պարագաներ
պարագաներ պարագաներ պարագաներ

ՀՀ Ազգային գրադարան



NL0402011

8093

ХАЧИК ДАШТЕНЦ
ЛОШАДЬ АНУШ
И ЕЕ ЖЕРЕБЕНОК

Гиз ССР Армении, Эривань